

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՆԴԱՂ ԱՃ

Միջազգային դրամատան նախագահ Տեյվիտ Մալպաս կը կարծէ, որ համաշխարհային տնտեսական աճը 2023-2024 թուականներուն պիտի դանդաղի՝ ուժեղացնելու եւ ներդրումներու բացակայութեան պատճառով: «Կարելի չէ իրավիճակի բարելաւում ակնկալել յառաջիկայ երկու տարիներուն ընթացքին», ըսաւ ան:

ԵՐԵՍՓՈՒՆԱՆՆԵՐՈՒ ՆԱՏԱՅՈՅՑ ԱՌԱՆՑ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՆՇՈՅԼԻ

Լիբանանի խորհրդարանը կը շարունակէ հիւրընկալել խուճար մը երեսփոխաններու նստացոյցը, որուն միջոցաւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիէն կը պահանջուի յայտարարել բաց նիստեր՝ մինչեւ հանրապետութեան նոր նախագահի ընտրութիւնը: Նստացոյցը սկսած էր ես-

րորի պաշտօնակատարը նաեւ քննադատեց Լիբանանի պառակտումի եւ դաշնակցային դրութեան ձգտողները, պնդելով որ անոնց բոլոր փորձերը ձախողած են:

ԲԱՆՈՒՄ ՊԱՍԿԱԿԱՆ ՄՕՏ

Լիբանանեան բանակի հրամանատարութիւնը յայտարարեց, թէ բանակէն ջոկատ մը խուզարկումներ կատարած է Պեքայի հիւսիսային քաղաքէն բնակավայրին մէջ, ուր տեղի ունեցած է հրաձգութեան փոխանակում զինուոր-

ՄԱՐԴ ԽՈՇՏԱՆԳԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Արցախի Հանրապետութեան նախագահի խորհրդական, նախագահի յատուկ յանձնարարութիւններով ներկայացուցիչ Դաւիթ Պապայեան համացանցային գրառումներով անդրադարձաւ Արցախի կազմաւտակարա-



րումը խափանելու ատրայեճանական հերթական քայլին: «Այս քաղաքականութիւնը շատ նման է մարդոց խոշտանգումներուն, երբ ծեծը որոշ ժամանակ կ'ընդհատուի, ապա վերստին կը շարունակուի», ըսաւ Պապայեան: Իր խօսքը ուղղելով Ատրայեճանի հասարակ քաղաքայիններուն, ան հարց տուաւ, թէ արդեօք գո՞հ են Արցախի անվերջ երեխաներու տառապանքները:

ՄԻՐՈՅԵԱՆ ՊՐԻՔՍԵԼԻ ՄԷՋ



Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան աշխատանքային այցելութեամբ պիտի ուղղուի Պրիքսել, ուր Եւրոպական խորհրդարանի արտաքին հարցերով յանձնաժողովի նիստին ընթացքին

(Շար.ը տեսնել 2րդ էջ) ▶▶

Կազմակերպութեամբ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՆԱԿԵԼԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ՀԱՅ ՅԵՐԱԺՈՒԿԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՐՑԱԽԻ ԶՈՐԱԿՑԱԿԱՆ Գ Ա Ի Ա Ք

ԸՆԳՂԵՍ ԱՅՐՊԵՅՏԱՆԻ ԿՈՂՄԵ ԾԱՆՍԾ ՇԱՅՄՔՄԱՆ ԱՐԵՍԻՆ

Տեղի կ'ունենայ չորեքշաբթի, 25 յունուար 2023-ին, կէսօրուան ժամը 12:00-ին, «Արին» կեդրոնին դիմաց, Պուրճ Համուտ:

ԿՈՉ

Ի ՆԵՂԻՐ ԱՐՑԱԽԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ

Այսու կողմէ կ'ուղղենք Լիբանանահայ մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն, եւ կը թելադրենք, որ Չորեքշաբթի, Յունուար 25, 2023-ին, կէսօրուան ժամը 12:00-էն մինչեւ ժամը 2:00, փակ պահուի մեր բոլոր եկեղեցիները, հայկական վարժարանները, հաստատութիւնները, կառոյցներն ու վաճառատուները, որպէսզի բոլորս միասին՝ հոգեւորական ու աշխարհական, ուսուցիչ, աշակերտ ու պաշտօնէտէլիս, ամբողջական մասնակցութիւն բերենք Պուրճ Համուտի «ԱՐԻՆ» կեդրոնին դիմաց ի խնդիր Արցախի պաշտպանութեան տեղի ունենալիք գորակցական հաւաքին:

Ազգային Առաջնորդարան Լիբանանի Հայոց
Լիբանանի Հայ Կաթողիկէ Եկեղեցի
Լիբանանի Հայ Աւետարանական Եկեղեցի



փոխան Մըլիէմ Խալաֆ հաւաստիացուց, որ պիտի մնայ խորհրդարանին մէջ, մինչեւ որ Պըրրիի համաձայնի բաց պահել նախագահի ընտրութեան նիստերը: Երեսփոխան Ուատտահ Սատեք իր կարգին շեշտեց, որ քաղաքական երկխօսութիւնը պէտք է կայանայ խորհրդարանին մէջ, նշելով որ նստացոյցին շնորհիւ միջազգային լրատուամիջոցները կեդրոնացած են Լիբանանի զարգացումներուն վրայ: Իսկ երեսփոխան Իպրահիմ Մեյմէն քննադատեց նախագահի ընտրութեան նիստի փոխարէն միացեալ յանձնաժողովներու նիստ գումարելու Պըրրիի որոշումը, զայն համարելով մարտահրաւերի տեսակ մը:

Խորհրդարանի փոխնախագահ Էլիաս Պու Սաապ միւս կողմէ վստահեցուց, որ Պըրրի պատրաստ է չեղարկելու երեսփոխանական այլ ժողովներ եւ գումարելու նախագահի ընտրութեան նիստ, եթէ նկատ նախագահի անունին շուրջ համաձայնելու նշաններ:

Երեսփոխաններու նստացոյցին զուգահեռ, քաղաքայիններ եւս կը շարունակեն խորհրդարանին շուրջ՝ բողոքելով



Օրէնսդիր մարմինի անգործութենէն: Յուզարարներ երկ վերստին փակեցին խորհրդարանի յարակից ճամբաներն մէկը:

Լիբանանեան ուժեր կուսակցութեան նախագահ Սամիր ժաաթա կարծիք յայտնեց, թէ լիբանանեան ճգնաժամին լուծումը կը կայանայ բարեկարգող եւ գերիշխան նախագահի մը ընտրութեան մէջ, որ կարողութիւն ունի



երկրին շահերը գերադասելու եւ կազմելու բարեկարգող կառավարութիւն մը՝ ամրապնդելով պետական հաստատութիւններուն գործունէութիւնը: «Քաղաքական բոլոր ընտրանքները առկայ են՝ երկիրը ազատագրելու հրաշքով լայն եւ իր դաշնակիցներու թախանէն», ըսաւ ժաաթա:

Յոյն ուղղափառներու Պեյրութի առաջնորդ Էլիաս Անուէ Եպիսկոպոսը յոյս յայտնեց, որ յաւելեալ երեսփոխաններ միանան խորհրդարանին մէջ նստացոյց կատարող իրենց պաշտօնակիցներուն՝ պահանջելով նոր նախագահի անյայտ ընտրութիւն:

ՊԱՍԿԱԿԱՆ ԶԱՆՈՂԱԾ ԵՆ

Ներքին գործերու նախարարի պաշտօնակատար Պասամ Մաուլաուի ահազանգեց, թէ քաղաքական որոշ ուժեր կը փորձեն ապահովական անկայունութիւն յառաջացնել, աւելցնելով որ «նախագահի ընտրութիւնը խոչընդոտողները եւս կը խաղան ապահովական քառսի խաղաքարտը»: Լրատուական գրոյցի մը մէջ Մաուլաուի դիտել տուաւ, որ Թայեֆի համաձայնութիւնը վերականգնած է Լիբանանի սահմանադրական աշխատանքը եւ արաբականութիւնը, կոչ ուղղելով ընտրելու երկրին նոր նախագահը եւ անսալու ժողովուրդի պահանջներուն: Նախա-



ներուն եւ զինուած աւազակներու միջեւ, որուն հետեւանքով մահացած է երեք զինեալ՝ երկու լիբանանցի եւ սուրիացի մը, մինչ բանակէն ռեւէ վիրաւոր կամ գոհ չկայ:

ԻՍՐԱՅԷԼԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՊԱՆԱԶՐԿՈՒՄ

Իսրայելի վարչապետ Պեհմեախ Եթանիաիու պաշտօնազրկեց իր կառավարութեան անդամներէն Արիէ Տարիին՝ առ ի գործադրութիւն Գերագոյն ատենի վճիռին, նկատելով, որ Տարիի նախապէս դատապարտուած է: Այսուհանդերձ, Տարիի վարած ներքին գործերու եւ առողջապահութեան նախարարութիւնները կ'ակնկալուի որ մընան կրօնական ծայրայեղական Շաս կուսակցութեան հետ, որովհետեւ տակաւին մաս կը կազմէ իշխող դաշինքին:



Իսկ իսրայելեան ոստիկանութիւնը յայտարարեց, որ Թել Աւիւի մէջ շուրջ հարիւր հազար ցուցարար պահանջած է կառավարութեան հրաժարականը՝ քննադատելով Նեթանիաիուի քաղաքականութիւնները:

Նշենք, որ Նեթանիաիու կը քննադատէ դատական մարմիններուն գործունէութիւնը եւ կը փորձէ յառաջ մղել բարեկարգումներ՝ սահմանափակելու համար Գերագոյն ատենի իրաւասութիւնները: Վարչապետին այս փորձը լուրջ խնդիր յառաջացուցած է երկրին մէջ:

ՅԱՐՁԱԿՈՒՄ ԹՐԵՎԱՆ ԴԻՐԵԻ ՎՐԱՅ

Մարդկային իրաւունքներու սուրիական դիտարանը յայտարարեց, թէ հիւսիսային Ազազ շրջանի սահմանային անցակետին մօտ տեղակայուած թրքական զինուորական դիրքը մը ենթարկուած է հրթիռային յարձակումի: Ըստ տեղեկութիւններուն, հրթիռները արձակուած են քիւրտերու տիրապետութեան տակ գտնուող շրջաններէն եւ անոնց մէկ մասը ինկած է սահմանին միւս կողմը:

ՀՐԱԶԳՈՒԹԻՒՆ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՄԷՋ

Անուազն 9 մարդ զոհուեցաւ Շաբաթ գիշեր, երբ հրաձգութիւն տեղի ունեցաւ ամերիկեան Գալիֆորնիա Լա-



հանգի հարաւային շրջանին մէջ, ինչպէս հաղորդեց ոստիկանութիւնը: Ըստ յայտարարութեան, միջադէպը տեղի ունեցած է Լոս Անճելըսի մօտակայ Մոնթրեյ Փարք շրջանին մէջ, ուր մարդիկ կը տօնէին լուսնային նոր տարին:

ԳԱՂԱՓԱՐԻ ՆԱՀԱՏԱԿ ՍԱՐԳԻՍ ՏԵՐՈՒՆԻ ՄԱՀՈՒԱՆ 94-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Կիրակի, 22 Յունուար 2023-ի առաւօտեան, Տիրուկի Ուսանողական Երիտասարդական Միութիւնը ռզեկոչեց հնչակեան մեծ գործիչ, գաղափարի և սահմանափակ Սարգիս Տիրուկի մահուան 94-րդ տարելիցը:

Նոր Զանոյ Ար. Գեորգ եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն կատարուեցաւ, ներկայութեամբ Ա.Դ.Յ.Կ. Լիբանանի շրջանի Վարիչ Մարմնի ատենապետ Ընկ. Վանիկ Տազետեանի եւ անդամներուն, մաս-



նաճիւղերու եւ յարակից միութիւններու վարչական պատասխանատուներուն, տիրուկական ընկեր-ընկերուհիներու եւ բազմաթիւ համակիրներու:

Ար. Պատարագէն ետք ներկաները այցելեցին Ֆըրն Շրպպէի Ազգային գերեզմանատունը, ուր պատշաճ ձեւով վերանորոգեցին մեծ երախտաւորին սկզբունքներուն հաւատարիմ մնալու իրենց ուխտը:



Հ.Մ.Ս. Պէյրուկի փողերախումբը նուագել է ետք Լիբանանի, Հայաստանի եւ Կուսակցութեան քայլերգները, տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն Ար. Յա-



րութիւն եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տէր Դեոնոյ քահանայ Լոշիաճեանի եւ Ար. Գեորգ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տէր Նարեկ Ա. Զահանայ Զեծիւնեանի մասնակցութեամբ:

Ա.Դ.Յ.Կ. Տիրուկի Ուս. Երիտ. Միութեան անունով խօսք առաւ Միութեան ատենապետ Ընկ. Սեւակ Իզմիրլեան: Ան, վեր առնել է ետք ևսահատակ ընկերոջ կեանքը, շեշտեց. «125 տարի առաջ ծնաւ տիպար, գաղափարապաշտ մեծ ուսուցիչ՝ Սարգիս Տիրուկին, որ իր գրիչով, բեմով, դաստիարակչական աշխատանքով լոյս ու յոյս սփռեց իր շրջապատին, ընկերութեան եւ իր պատկանած գաղափարական շարժումին: Ան կանգնեցաւ ոչ միայն

հայ ժողովուրդի, նաեւ արաբ ժողովուրդի ազատագրական պայքարի կողքին եւ իր քաղաքական գործունէութեան համար ձերբակալուեցաւ եւ աքսորուեցաւ:

Որպէս տիրուկականներ, նուիրումով եւ անսակարկ գործունէութեամբ հետեւորդներն ենք Սարգիս Տիրուկի գաղափարախօսութեան եւ հայրենասիրութեան մեծ դարողին: Այսօր մենք անգամ մը եւս եկած ենք վերանորոգելու մեր ուխտը՝ կը ձգտինք մեր Սուրբ հաւատքի ծրագիրներու յաջողութիւնը արձանագրելու յարատեւօրէն: Նոյն ոգին, նոյն սէրը, նոյն նուիրումն է որ կը խանդավառէ իւրաքանչիւր տիրուկականը, զայն կը մղէ



գործի ու զոհողութեան՝ միշտ բարձր դասելով ազգային շահերը»:

Ընկերը անցուցւո՞ւ ըսելով. «Ահա այսօր կանգնած կ'ուխտենք շարունակել այդ գաղափարախօսութիւնը մինչեւ մեր վրանները լարենք Արարտի փէշերուն:

Կը խոստանանք անշահախնդիր զգացումներով, նուիր-



ւածութեամբ, հաւատարմութեամբ եւ անկեղծութեամբ կանչած մնալ մեր հայրենիքին եւ ծառայել հայ ժողովուրդին: Եեզմէ սորվեցանք հայրենիքը դասել բոլոր շահերէ վեր, որովհետեւ հայրենիքը կերտելով կ'ապահովենք հայ ազգին գոյատեւումը եւ յարատեւումը:

Միտենք եւ պաշտպանենք մեր հայրենիքը ոչ թէ խօսքով, այլ՝ գործով:

Խունկ ու մոմ մեզմէ առ յաւետ բաժնուած գաղափարակից ընկերներու եւ ընկերուհիներու յիշատակին»:

Որմէ ետք ասմունքով ելոյթ ունեցաւ Տ.Ո.Ե.Մ.-ի անդամ Փաթիլ Փափագեան:



Ռզեկոչման աւարտին տեղի ունեցաւ ծաղիկներու գետեղում եւ մոմավառութիւն: Ներկաները մոմ վառեցին անմահ Տիրուկի շիրմին եւ ապա «Ամմահն Տիրուկի» եւ «Ուխտի Հրակեր» երգերով խոստացան շարունակել մեծ ևսահատակին պատգամները:



ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ Է ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ԿԱՐԳ ՀՐԴԵՂԵՆ ՉՈՀՈՒՄԸ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Սուրբ Գայիանէ վանքին մէջ, 22 Յունուարին, յընթացս Սուրբ եւ Ամմահ Պատարագի, Նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. ծայրագոյն պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսին, կատարուած է հոգեհանգստեան կարգ:



Մայր Աթոռի միաբանութիւնն ու ներկայ հաւատացեալները աղօթք բարձրացուցած են առ Աստուած՝ ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան «Ո» գործառնախ ճարտարապետական-սակարարային վաշտի կացարանին մէջ բռնկած հրդեհին հետեւանքով զոհուած զինուորներու հոգիներու խաղաղութեան եւ հանգստութեան համար:

ՄԱՐԴ. ԽՈՇՏԱՆԳԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(Շարունակուած Ա. Էջէն)

հանդէս պիտի գայ ելոյթով, որուն մէջ պիտի անդրադառնայ Հարաւային Կովկասի կայունութեան եւ անվտանգութեան խնդիրներուն, միջանցքի արգելափակումին եւ Արցախի մէջ մարդասիրական աղետի վտանգին: Ան նաեւ պիտի պատասխանէ երուպացի երեսփոխաններու հարցումներուն: Նախարարը Պրիւքսելի մէջ նաեւ պիտի ունենայ տեսակցութիւններ երոմիութեան եւ ԱՊԹ-ի պաշտօնատարներուն հետ:



Ռուսիոյ Պաշտպանութեան Նախարարութիւնը յայտարարեց, թէ Արցախի մէջ գործող ռուս խաղաղապահներու հրամանատարութիւնը կը շարունակէ բանակցութիւնները հայկական եւ ատրպէյճանական կողմերուն հետ՝ ապահովելու համար Ստեփանակերտ-Գորիս ճանապարհով ինքնաշարժներու անխոչընդոտ տեղաշարժը: Ըստ Նախարարութեան, խաղաղապահները վերսին ընկերակցած են մարդասիրական բեռ փոխադրող բեռնակառքերու:

ԱՐՑԱԽԵՆ ԸՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ՝ ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՀԱՅԵՐՈՒՆ

Արցախի պետական Նախարար Ռուբէն Վարդանեան յայտնեց, թէ հայրենիքէն հեռու ապրող իւրաքանչիւր հայու ձայնը եւս կարելի է: Համացանցային գրառումով մը պետական Նախարարը դիտել տուաւ, որ հռչակաւոր հայերու, ընդ որում՝ Կարեն Խաչատուրի, Հենրիկ Մխիթար-



եանի, Ռոզա Լիսի, Քիմ Բարտաշեանի, Սերժ Թանգեանի եւ շատ ուրիշներու օրինակները ցոյց կու տան, թէ կարելի է հայկական աշխարհի ծանօթ ներկայացուցիչներու աջակցութիւնը, համախմբուածութիւնն ու համատեղ ջանքերը՝ Արցախի ձայնը ամբողջ աշխարհին լսելի դարձնելու համար:

Նշենք, որ թենիսի Աստրալիոյ մեծ մրցաշարի մրցումներուն ընթացքին, հայազգի մարզիկ Կարեն Խաչատուր անգլերէնով Արցախին աջակցող գրառում կատարեց մրցումները նկարահանող տեսախցիկներէն մեկուն վրայ:

«Արարատ» օրաթերթը «Յայտնիներու 10 Իրերը» յօդուածաշարքով պիտի ներկայացնէ յայտնի մարդոց կեանքէն տասը պատմութիւն, որոնց կողող անշունչ իրեր են:

ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ 10 ԻՐԵՐԸ

Յովհաննէս Թումանեան՝ Ամենայն հայոց բանաստեղծ: Ծած է 1869 թուականին՝ Դսեղի մէջ, մահացած՝ 1923-ին՝ Մոսկուայի մէջ: Թումանեանի թիֆլիսեան տունէն գրողին բոլոր իրերը 9 մեծ բեռնատարով 1953 թուականին Երեւան տեղափոխուեցան, ուր բանաստեղծին կնոջ եւ աղջիկներուն ջանքերով «վերստեղծուեցաւ» թիֆլիսեան տունը:



Աւետիք Իսահակեան՝ հայ բանաստեղծ, արձակագիր, հասարակական գործիչ, 33 Գիտութիւններու ակադեմիայի ակադեմիկոս: Ծնած 30 Դոտեմբեր է 1875 թուականին՝ Ալեքսանդրապոլի գաւառի Դազարապատ գիւղը, մահացած է՝ 17 Դոկտեմբեր 1957 թուականին՝ Երեւանի մէջ:



Գրողին՝ 31 Դոկտեմբեր 1963-ին բացուած տուն-թանկարանին մէջ կը պահուին անոր բազմաթիւ արժեքաւոր իրերը: Իսահակեանը այս տան մէջ ապրած է իր կեանքի վերջին տասը տարիները:

1) Զրամանը
Աւետիք Իսահակեանի հայրական տունէն Երեւան տեղափոխուած իրերու կողքին կ'առանձնանայն ջրամանը:



Այս փոքրիկ դոյլը գրողի ամենասիրելի իրերէն եղած է մանկութեան տարիներուն: Ան խաղցած է դոյլով, իսկ ընտանիքը սրբութեամբ պահպանած ու մեր օրեր հասցուցած է զայն:

2) Զարեանցի Նուէրը
Արեւելեան մշակոյթով եղիչէ Զարեանցի եւ Աւետիք Իսահակեանի հրապուրուած ըլլալու մասին կը վկայէ Զարեանցի Նուէրը բազա ընկերոջը:



Զարեանցի դեմ սկսած հայաձանքներէն ու կալանքներէն յետոյ երկու մեծ հայ գրողները չեն դադարած հանդիպելէ: Զարեանցը կեանքի վերջին ամիսներուն տնային կալանքի տակ էր, իսկ Աւետիք Իսահակեանն ու անորր ընտանիքի անդամները կը փորձէին կապը պահել: Իսահակեանի հարսը՝ դերասանուհի Պելլա Իսահակեանը, ձերբակալուեալէն առաջ կ'երթայ Զարեանցին տեսակցութեան, հանդիպման աւարտին Զարեանցը անկէ կը խնդրէ քիչ մը սպասել: Ան հայեացքը կը նետէ իր սեղանին եղած արձանիկներուն, կը վերցնէ Զինական օճառաքարէ արձանիկը եւ մեխով անոր տակ կը փորագրէ. «Սիրելի Աւետիքին, Զարեանց, 24 / VI 1937 թ.»:

Սա կը համարուի Զարեանցի հրաժեշտի Նուէրը Իսահակեանին:

3) Գորգը
«Սասունցի Դաւիթ» գորգը Իսահակեանին նուիրած է Զայաստանի կառավարութիւնը՝ գրողին ծննդեան 65-ամեակին: Գորգը յատուկ Իսահակեանի համար հիւսուած է,



եւ կ'առանձնանայ անով, որ չմանուած բուրդի թելերով գործուած է: Այս գորգը Իսահակեանի սիրելի իրերէն մեկը եղած է, որ կախուած է անոր հիւրասենեակի պատին:

4) Դեռուստացոյցը
Իսահակեաններու ընտանիքը առաջիններէն էր, որ հեռուստացոյց ուներ: Գրողին թոռնիկը՝ Անիկ Իսահակեանը կը յիշէ, որ ընկերներուն հետ յաճախ կու գային տուն՝ հեռուստացոյց դիտելու: Անգամ մը ընկերներով հարաւսլաւական «Կանա» ֆիլմը դիտած են, որուն ընթացքին



համբոյրի տեսարան եղած է: Իսահակեանը միևնույն ատեն տեսարանը երիտասարդներուն հետ դիտած է ֆիլմը, ապա դուրս եկած է պատշգամբ, ծխախոտ մը վառած է եւ մտախոհ ըսած. «Այս արկղը օր մը մեր երեխաները պիտի փճացնէ»:

5) Սևուկը
Աւետիք Իսահակեանի տան բակին մէջ դրուած սևուկին մէջ ժամանակին պահուած են գրողին գիրքերը, անձնական փաստաթուղթերը: Կը պատմեն, որ դիմացի հա-



րեանը, որ կօշկակար էր, տան մէջ մասնաւոր պատուէրներով կօշիկ կը կարէր: Եւ, քանի որ այդ արգիլուած էր ու բացայտուելու պարագային կրնար դատուիլ, ամէն անգամ հնարաւոր ստուգայցերուն ժամանակ ան իր գործիքները կը բերէր եւ կը թաքցնէր այս սևուկին մէջ: Վարպետը զանոնք կը դնէր ներքեւը եւ վրան կը շարէր գիրքերը:

6) Մարմարի կտորները
Աթենքի մէջ Իսահակեանը կ'այցելէ Աքրոփոլիս: Զնագոյն յուշարձանի տարածքէն մարմարի կտորներ դուրս բերելը արգիլուած էր, սակայն գրողը չի կրնար դիմադրել գայթակղութեան: Իսահակեան խորամանկութեան կը



դիմէ՝ աջալուրջ պահակը մոլորեցնելու համար: Ան վար կը ձգէ գլխարկը եւ երբ կը կռանայ գայն վերցնելու, գլխարկին հետ մարմարի երկու փոքրիկ կտոր կը նետէ Գայաստան: Իսահակեանը մարմարի կտորները կը բերէ Զայաստան: Անոնք երկար տարիներ դրուած են անոր աշխատասեղանին վրայ:

7) «Աղջիկը եւ եղիկը» արձանիկը
Աւետիք Իսահակեանի աշխատասեղանի մշտական իրերէն էր «Աղջիկը եւ եղիկը» արձանիկը: Սիրելի արձա-



նիկը վարպետը միշտ աչքին առջեւ կը պահէր: Երբ Իսահակեանը կը նստէր գրասեղանին առջեւ աշխատելու, ձեռքի թագպէտը կը կախէր աղջկան վիզէն: Իսահակեանի յայտնի լուսանկարներին մէջ արձանիկը միշտ աշխատասեղանին վրայ է:

8) Տուֆակերտ Նստարանը
Յովհաննէս Թումանեանի դուստրը՝ Թամարը, որ մասնագիտութեամբ ճարտարապետ էր, յաճախ կը գտնուէր Աւետիք Իսահակեանի տունը: Այցելութիւններէն մեկուն



ժամանակ Իսահակեանը անոր կը յայտնէ Նստարան ունենալու իր ցանկութիւնը: Թամարը այս ցանկութիւնը ի կատար կ'ածէ բանաստեղծի ծննդեան 80-ամեակին: Թումանեանի դստեր առաջարկութեամբ Զայաստանի ճարտարապետներու միութիւնը, Ռաֆայէլ Իսրայէլեանի Նախագիծով, տուֆակերտ Նստարան կը նուիրէ Իսահակեանին: Գործարարապետները իրենք կը բերեն Նստարանը: Այն կը դրուի թթենիի տակ: Իսահակեանը շատ կը սիրէր այգին գիշերով ջրել, որմէ յետոյ անուրջել Նստարանին Նստած:

9) Գիշերազգեստը, հողաթափերն ու սկուտեղը
Աւետիք Իսահակեանի ննջարանին մէջ անոր գիշերազգեստն ու հողաթափերն են, որոնք բանաստեղծը հագած է կեանքի վերջին տարիներուն: Լուսանկարներէն յայտնի գիշերազգեստը խնամքով ծալուած-կախուած է մահճակալին հարեւանութեամբ դրուած աթոռին, իսկ հողաթափերը՝ մահճակալին մօտ:



Ննջասենեակին մէջ քիչ մը հեռու Իսահակեաններու տան սիրելի սկուտեղն է, որ Փարիզէն բերուած է: Այս սկուտեղով բանաստեղծին կինը՝ Սոֆին, սիրելի ամուսինին սուրճ մատուցած է ամէն առաւօտ: Իսահակեանը շատ սիրած է յատկապէս կաթով սուրճը:

10) Մօր նկարն ու վզկապը
Բանաստեղծի ամբողջ կեանքի ընթացքին անոր մօտ եղած են մօր նկարն ու վզկապը: Արտասահմանի մէջ ապրելու տարիներուն լուսանկարը վարպետի աշխատասե-



նեակին կամ ննջարանին մէջ փակցուած եղած է: Վերջին տարիներուն Իսահակեանը լուսանկարը փակցուցած է ննջասենեակին մէջ եւ մօր պատկերը իրեն ուղեկցած է մինչեւ իր կեանքին աւարտը:

ԱՐԱՐԱԴ ԳԻՄՆԱԿԱՆ ԿՐԻՍԻՍ

ԼԻԲԱՆՆԻ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ Բ. ՓՈՒԼԻ 3-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ ԱՐՇԵ ԵՒ ՇԱՊԱԴ ՅԱՂԹԱԿԱՆ

Լիբանանի ֆուտբոլի ֆիդայանություն Բ. փուլի 3-րդ հանգրուանին, 2-րդ դիրքը գրավող «Ահլտ»ը մրցեցաւ 5-րդ դիրքը գրավող «Պըրժ»ի դէմ, ճունիի «Ֆուատ Շեհապ» մարզադաշտին վրայ եւ յաղթանակ տարաւ: Լի Իրուին՝ 9-րդ, 17-րդ եւ Ռիքրտ Պաֆուր սխալմամբ՝ 15-րդ վայրկ-



եաններուն յառաջ տարին «Ահլտ»ը: 45+1-րդ վայրկեանին, Խալէտ Թաքաժի հաշիւը դարձուց 1-3: Սակայն Մոհամմատ Յայտար տուգանայինով՝ 48-րդ եւ Խա Եա-գուաօ՝ 89-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուցին 1-5: Այս արդիւնքին հիման վրայ, «Պըրժ» ակումբի տնօրէնու-թիւնը պաշտօնազրկեց խումբին մարզիչը: Իսկ 4-րդ դիրքը գրավող «Շապապ Սահէլ» մրցեցաւ 6-րդ դիրքը գրավող «Շապապ Ղազիէ»ի դէմ ու յաղթանակ տարաւ: Մրցումի 6-րդ վայրկեանին, Յայտար Ապու Չէյտ յառաջ տարաւ «Շապապ»ը: Սակայն Չէյտ Ֆարրան՝ 36-րդ եւ Ֆատըլ Անթար՝ 37-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուցին 2-1: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Առաջին վեցեակ.** - Պըրժ - Ահլտ 1-5
- Շապապ Սահէլ - Շապապ Ղազիէ 2-1
- Երկրորդ վեցեակ.** - Սալամ Չղարթա - Սաֆա 0-1
- Ախաա Ահլի Ալէ - Յիքմէ 0-1

ԼԻԲԱՆՆԻ Գ. ՂԱՍԱԿԱՐԳԻ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 10-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ Զ.Ս.Ս. ԳՐԱՎԵՑ 5-ՐԴ ԴԻՐՔԸ

Լիբանանի ֆուտբոլի Գ. դասակարգի ֆիդայանու-թեան առաջին փուլի վերջին՝ 10-րդ հանգրուանին, 5-րդ դիրքը գրավող «Յ.Ս.Ս.» մրցեցաւ 2-րդ դիրքը գրավող Խարայեպի «Ուխուա»ին դէմ ու արձանագրեց իր 5-րդ պարտութիւնը: Մոհամմատ Ապպուտ՝ 10-րդ, Ապըտ Խալիլ՝ 12-րդ, 25-րդ վայրկեաններուն յառաջ տարին «Ալ Ուխուա»ն: 39-րդ վայրկեանին, Մոհամմատ Ապտէլսաթըր հաշիւը դարձուց 3-1: 55-րդ վայրկեանին, Քարիմ Թարիհ-նի Նշանակեց «Ուխուա»ի 4-րդ կողմը: 62-րդ վայրկեանին, Ալի Յիժազի հաշիւը դարձուց 4-2: Սակայն Մահմուտ Տեյնի՝ 70-րդ եւ Ահմատ Տեյնի՝ 72-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուցին 6-2: Այս արդիւնքին հիման վրայ, խմբակին առաջին երկու դիրքերը գրավող խումբերը պիտի մրցին բարձրանալու համար Բ. դասակարգ: Իսկ 5-րդ դիրքը գրավող «Յ.Ս.Ս.» պիտի մրցի խուսափելու համար Գ. դասակարգին հրաժեշտ տալէ: Ստորեւ տեսնել 10-րդ հանգրուանին արձանագրուած արդիւնքները եւ դասաւորումը.

- Դ. խմբակ.** - Ուխուա Խարայեպ - Յ.Ս.Ս. 6-2
- Թաքատտոմ Անքուն - Ռայա 5-1
- Պասաւորում.** 1) Իրշատ 8 մ 20 կետ 19-4, 2) Ուխուա 8 մ 18 կետ 22-8, 3) Թաքատտոմ 8 մ 8 կետ 11-10, 4) Ռայա 8 մ 7 կետ 9-20, 5) Յ.Ս.Ս. 8 մ 3 կետ 9-28

ԱՆՂԻՆՈՅ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 21-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ ԵՐԿՈՒ ՅԱՎԱՍԱՐՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆուտբոլի ֆիդայանություն դարձի երկրորդ՝ 21-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ տեղի ունեցաւ «Լիվըրփուլ» - «Չելսի» մրցումը, Լիվըրփուլի «Էնֆիլտ» մարզադաշտին վրայ: 9-րդ դիրքը գրավող «Լիվըրփուլ»



մրցեցաւ 10-րդ դիրքը գրավող «Չելսի»ի դէմ ու հակառակ բոլոր փորձերուն, մրցումը աւարտեցաւ առանց կոլերու հաւասարութեամբ: Իսկ 4-րդ դիրքը գրավող «Նիքքեթըլ Եունայթըտ» իր դաշտէն դուրս առանց կոլերու հաւասարեցաւ. 12-րդ դիրքը գրավող Լոնտոնի «Քրիսթըլ Փալաս»ին հետ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Լիվըրփուլ - Չելսի 0-0
- Լէյքըր Սիթի - Պրայթըն Էստ Յով Ալպիզը 2-2
- Քրիսթըլ Փալաս - Նիքքեթըլ Եուն. 0-0
- Սաութհեմփթըն - Ասթըն Վիլլա 0-1
- ԱՖՍ Պորնմըթ - Նորթհեմփթըն 1-1

ՄՊԱՆԻՅՈՅ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 18-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ ՌԵԱՆ ՍՈՍԻԵՏՍԵ ԵՒ ԱԹԼԵԹԻՔՈ ՅԱՂԹԵՑԻՆ

Սպանիոյ ֆուտբոլի ֆիդայանություն երթի Լախա-վերջին՝ 18-րդ հանգրուանի հետաքրքրական մրցումի մը ընթացքին, 3-րդ դիրքը գրավող Սան Սեպասթիանի «Ռեալ Սոսիետատ»ը իր դաշտէն դուրս մրցեցաւ 9-րդ դիրքը գրա-վող Մատրիտի «Ճայօ Վալեքանօ»ի դէմ ու արձանագրեց իր 12-րդ յաղթանակը: Նորվեկիացի յարձակող Սեորլոթ՝ 15-րդ եւ յարձակող Պարրենթիսիա՝ 36-րդ վայրկեաննե-րուն Նշանակեցին խումբին կոլերը, կիսապաշտպան Տա-լիտ Միլվալի եւ պաշտպան Էլուսթոնտոյի փոխանցում-ներով: Ուրիշ մրցումի մը ընթացքին, 4-րդ դիրքը գրավող «Աթլետիքօ Մատրիտ» իր դաշտին վրայ մրցեցաւ 17-րդ դիրքը գրավող «Ռեալ Վալատոլիտ»ի դէմ ու յաղթանակ տարաւ: Յարձակեժ Ալվարօ Մորաթա՝ 18-րդ, ֆրանսացի յարձակող Կրիզման՝ 23-րդ եւ պաշտպան Յերմուզօ՝ 28-րդ վայրկեաններուն Նշանակեցին խումբին կոլերը, Կրիզմա-նի եւ արժանաւորի պաշտպան Մոլիսայի մէկական փո-խանցումներով: 19-րդ դիրքը գրավող «Սեւիլյա»ն իր դաշտին վրայ յաղթեց 18-րդ դիրքը գրավող «Քատիզ»ին եւ 18 կետով առժամաբար գրաւեց 15-րդ դիրքը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Մայորքա - Սեւիլա Վիլո 1-0
- Ռայօ Վալեքանօ - Ռեալ Սոսիետատ 0-2
- Եսփանիոլ - Ռեալ Պեթիս 1-0
- Աթլետիքօ Մատրիտ - Ռեալ Վալատոլիտ 3-0
- Սեւիլյա - Քատիզ 1-0

ԻՏԱԼԻՅՈՅ ՍԻՒՇՈՐ ԲԱԺԱԿ ԻՆԹԵՐ ՄԻԼԱՆ ՏԻՏՐՈՍԱԿԻՐ

Իտալիոյ Սիւփըր բաժակի մրցումը իրարու դէմ հանեց Միլանօ քաղաքի երկու խումբերը: Ախոյեան «ԱՍ Միլան» եւ «Ինթեր Միլան», Սեուսական Արաբիոյ մայրաքաղաք Ռիատի մէջ: Յակառակ անոր որ «ԱՍ Միլան» ունէր տի-րապետութիւն 66 առ հարիւր համեմատութեամբ, սակայն «Ինթեր Միլան»ն էր աւելի արդիւնաւետ ձեւով գործող



կազմը: «ԱՍ Միլան» իր կատարած 3 դիպուկ ու 5 անկիւ-նային հարուածներէն կոլ չկրցաւ Նշանակել, մինչ «Ինթեր Միլան» իր կատարած 6 դիպուկ ու 6 անկիւնային հարուած-ներէն Նշանակեց երեք կոլ: Պաշտպան Տիմարթօ՝ 10-րդ, պոստիացի յարձակող Ճեթօ՝ 21-րդ եւ արժանաւորի յար-ձակող Լաուրաթօ մարթիսեզ՝ 77-րդ վայրկեաններուն Նշանակեցին խումբին կոլերը, կիսապաշտպան Պարել-լալի, կիսապաշտպան Պալոսիի եւ վրովաք պաշտպան Շըրինիարի փոխանցումներով: Յետիկ Միլիթարեան մասնակցեցաւ ամբողջ մրցումին «Ինթեր Միլան»ի կազ-մէն: «Ինթեր Միլան» յաղթանակ տարաւ ու շահեցաւ իր 7-րդ տիտղոսը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- ԱՍ Միլան - Ինթեր Միլան 0-3

Մրցաշարքը սկսած է 1988 թուականին: Մրցումին կը մասնակցին երկրի ֆիդայանը եւ բաժակակիրը: Տիտղոսը շահած են «Եուվենթիս»՝ 9 անգամ, «ԱՍ Միլան» եւ «Ին-թեր Միլան»՝ 7-ական անգամ, «Լաչիօ Ռոմա»՝ 5 անգամ, «Ռոմա» եւ «Նափոլի»՝ 2-ական անգամ, «Սամպիորիա», «Փարմա» եւ «Ֆիորենթինա»՝ մէկական անգամ:

ԱՅՍՕՐՈՒՄԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

- ԱՆՂԻՆՈՅ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 21-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ**
22:00 Ֆուլհեմ (7) - Թորքընհեմ Յոգփըր (5)
- ՄՊԱՆԻՅՈՅ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 18-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ**
22:00 Վալենսիա (13) - Ալմերիա (14)
- ԻՏԱԼԻՅՈՅ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 19-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ**
19:30 Պոլոնիա (11) - Երեմոնեզէ (20)
- 21:45 Ինթեր Միլան (3) - Էմփոլի (12)
- ՖՐԱՆՍԱՅԻ ԲԱԺԱԿԻ 1/16-ՐԴ ԱՄԱՐՏԱԿԱՆ**
21:45 Փէյ Տը Զասէլ (Շրջ. լիկա) - Փարի Սէն Ճերմէն (Ա.)
- ՓՈՐՏՈՒԿԱԼԻ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 17-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ**
22:15 Պոալիսթա (12) - Չապէշ (9)
- ՍԿՈՎՏԻԱՅԻ ԲԱԺԱԿԻ 1/16-ՐԴ ԱՄԱՐՏԱԿԱՆ**
21:45 Տարվէլ (Շրջ. լիկա) - Եպրտին (Ա.)
- ԿԻՊՐՈՍԻ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 20-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ**
19:00 Անորթոզիս Ֆամակ. (10) - Էւոսիս (11)
- ԱՓՐԻԿԵԻ ԱՉԳԵՐՈՒ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 3-ՐԴ ՅԱՆՎՈՐ.**
21:00 Սուտան (3) - Մատակապար (1)
- ԵԳԻՊՏՈՍԻ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 15-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ**
17:00 Սերաիքա Զլէուփարթա (10) - Ճէշ (12)
- 19:00 Իթթիհատ Աղէքս. (6) - Յարաա Ալ Յուտուտ (16)

- ՊԱՔԵԹՊՈՒԼԻ ԵՆ.ՊԻ.ԷՅ.Ի ԱՆՈՅՆԱՆՈՒԹԻՒՆ**
03:00 Շիքսկօ Պուլզ (10) - Աթլանթա Յոքս (8)
- 05:30 Սաքրամենթօ Զինկզ (3) - Մեմֆիս Կրիզլիզ (2)
- ՊԱՔԵԹՊՈՒԼԻ ԼԻԲԱՆՆԻ 14-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ**
16:45 Յուսիս (9) - Ռիատի Պերլուք (4)
- ԹԵՆԻՍԻ ԱՄԵՐԱԼԻՅՈՅ ԲԱՅ ՄՐՅ. 1/4-ՐԴ ԱՄԱՐՏԱԿԱՆ**
01:00-ԷՆ սկսեալ, «beinsports» կայանէն
- ՉԵՇԵՆԱՐՇԱՒ**
19:20 Վուլթաա Ա Սան Խուան շրջափազք, «eurosport»ԷՆ

ՃԱՏՐԱԿ ՅԱՅՏԱՍԱՆԻ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԻՒՆ ՏԵՐ ՍԱՅԱԿԵԱՆ ԵՒ ԳԵՈՐԳԵԱՆ ՇԱՐԵՑԱՆ ՏԻՏՐՈՍՆԵՐԸ

Երեանի Տիգրան Պետրոսեանի անուան ճատրակի ակումբին մէջ աւարտեցան ճատրակի Յայաստանի տղոց 83-րդ եւ կիներու 76-րդ ֆիդայանություն մրցումները: Տղոց մրցաշարքին մասնակցեցան 10 վարպետներ: Այս մրցաշարքին յաղթողը մաս կը կազմէ Յայաստանի ճատրակի հաւաքականին: Ստորեւ տեսնել վերջին՝ 9-րդ հան-գրուանին արձանագրուած արդիւնքները եւ դասաւորումը.



Սամուէլ Տէր Սահակեան - Ռոպերթ Յովհաննիսեան 1-0
Մանուէլ Պետրոսեան - Չաւէն Անրիասեան 0.5-0.5
Արմէն Բարսեղեան - Սարգիս Սարգսեան 0.5-0.5
Մամիկոն Ղարիպեան - Տիգրան Յարութիւնեան 0.5-0.5
Արամ Յակոբեան - Տիգրան Պետրոսեան 0.5-0.5

Կիներու մրցաշարքին մասնակցեցան 10 կիս վար-պետներ: Ստորեւ տեսնել վերջին՝ 9-րդ հանգրուանին արձանագրուած արդիւնքները եւ դասաւորումը.

Նուարդ Յայրապետեան - Մարիա Գեորգեան 0-1
Փոլինա Քոպաք - Սուսանա Կապոյեան 0-1
Արփինէ Գրիգորեան - Աննա Խաչատրեան 0.5-0.5
Աստղիկ Յակոբեան - Վերոնիքա Խաչատրեան 1-0
Ասիա Ետիկարեան - Նարինէ Գասպարեան 0.5-0.5



Պասաւորում. 1) Մարիա Գեորգեան 7 կետ / յաւելեալ ցուցանիշ. 26.0, 2) Մանուէլ Պետրոսեան 6 կետ / 22.75, 3) Ռոպերթ Յովհաննիսեան 5.5 կետ / 22.75, 4) Տիգրան Յարութիւնեան 5.5 կետ / 20.75:

ՀԱՆԳԻՍ

Ն.Ս.Օ.Տ. Արամ Ա. Կարողիկոս եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութիւնը ստի գտն կակիժով կը գոծեն Կիլիկեան Ուխտի Միաբանութեան երիցադոյն անդամներէն

Տ. ԵՓՐԵՄ ԱՐՔ. ԹԱՊԱԳԵԱՆԻ (1941-2023)

Վախճանումը, որ պատահեցաւ Շաբաթ, 21 Յունուար 2023-ին, Լոս Անճելէսի մէջ:

Վերջին օժման ու թաղման կարգի թուականը պիտի յայտարարուի յառաջիկայ օրերու ընթացքին:

Կիւսկի, 22 Յունուարին, Ս. և Անմահ Պատարագի աւարտին, Վեհափառ Հայրապետին նախագահութեամբ, հոգնանգիստ պիտի կատարուի հոգեղոյս սրբազանին հոգիին խաղաղութեան համար:

ՊՈՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒՄԱՆԻ

www.araraddaily.com

ARARAD DAILY NEWSPAPER
MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أجنبية | المديرية المسؤولة: اني صرافيان
(م.م.م) تصدر عن شركة مسييسر للملاقة والنشر